

Համարը N 380-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2010.04.21/16(750)
Հոդ.428

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.05.2010

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 08.04.2010
Ստորագրման ամսաթիվը 14.04.2010
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

Կատարել է փոփոխություններ հետևյալ փաստաթղթերում`	Յուրաքանչյուր փոփոխվողին համապատասխանող ինկորպորացիան`
Կառավ.26.09.2002,N 1587-Ն	Կառավ.26.09.2002,N 1587-Ն

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՍՏԵՂԾԵԼՈՒԻ, «ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏԱՐԱԾՔԻ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒԻ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 ապրիլի 2010 թվականի N 380-Ն

«ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ ՍՏԵՂԾԵԼՈՒԻ, «ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՏԱՐԱԾՔԻ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասին, 8-րդ հոդվածի «ե» և «զ» ենթակետերին և 18-րդ հոդվածին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է`**

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Գուգարաց լեռնաշղթայի Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան դիրքադրության լանջերի անտառային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս` մարզի վարչական սահմաններում գտնվող` պետական սեփականություն հանդիսացող 150.0 հեկտար տարածքում ստեղծել «Զիկատար» պետական արգելավայր` ընդգրկելով Գուգարաց

լեռնաշղթայի՝ Կողբ գետի աջափնյա վտակների ավազանների վերին հատվածները:

2. Հաստատել՝

1) «Զիկատար» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագիծը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների, և տարածքի չափը՝ 150.0 հեկտար.

2) «Զիկատար» պետական արգելավայրի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 150.0 հեկտար անտառային հողերը, որից՝ 131.5 հեկտար անտառ, 8.2 հեկտար խոտհարք, 5.6 հեկտար պտղատու այգի, 1.8 հեկտար անտառային տնկարան, 1.7 հեկտար շենքերի և շինությունների տակ գտնվող հողեր, 1.2 հեկտար անտառային ճանապարհներ փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա և հատկացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1587-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա» «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

«Զիկատար» պետական արգելավայրի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման, ինչպես նաև պետական արգելավայրի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը,

անտառաշինական աշխատանքների իրականացումը,

անտառ-էկոլոգիական գիտափորձարարական ուսումնասիրությունների և անտառի գենետիկական պաշարների պահպանության ու վերարտադրության գիտաներդրական փորձարկումների կազմակերպումն ու իրականացումը,

անտառային պաշարների մասին տեղեկատվական բանկի ստեղծումը և օգտագործման արդյունավետ ձևերի մշակումը,

կենսաբազմազանության պահպանման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմումը,

անտառագիտասփյուռ աշխատանքները, անտառատնտեսության բնագավառի համար կադրերի վերապատրաստումը և ուսումնասիրատարական պրակտիկայի կազմակերպումը.».».

2) չեղյալ ճանաչել որոշման 3-րդ կետը.

3) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 4 հավելվածի.

4) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 5 հավելվածի:

5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սույն որոշման 3-րդ կետում նշված հողամասերի՝ սահմանված կարգով տրամադրումը:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի

Հանրապետության բնապահպանության նախարարության «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ «Զիկատար» պետական արգելավայրի 150.0 հեկտար հողամասերի և այլ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

7. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ և ապահովել դրա պետական գրանցումը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել նշված կազմակերպության՝ սույն որոշմամբ հանձնվող անշարժ գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումը:

8. Սահմանել, որ սույն որոշումից բխող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված աշխատանքները կատարվելու են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփական միջոցների հաշվին:

9. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հողային ֆոնդի ընթացիկ հաշվեկշռման ժամանակ մարզի հողային հաշվեկշռում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություն:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2010 թ. ապրիլի 14
Երևան

«ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Զիկատար» պետական արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան դիրքադրության լանջերի վրա:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 150.0 հեկտար: Այն ամբողջովին դուրս է մարզի համայնքների վարչական սահմաններից և սահմանակցում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Նոյեմբերյանի անտառատնտեսություն» մասնաձյուղի անտառային հողերին:

Տարածքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է «Նոյեմբերյանի անտառատնտեսություն» մասնաձյուղի Նոյեմբերյանի անտառապետությանը, իսկ հյուսիսից, հարավ-արևելքից, հարավից և արևմուտքից «Բ»-«Ա» հատվածով՝ Զիկատարի անտառապետությանը:

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Զիկատար» պետական արգելավայր-Նոյեմբերյանի անտառապետություն Սահմանագիծը՝ «Ա»-«Բ»

«Զիկատար» պետական արգելավայրի, Նոյեմբերյանի անտառապետության 8-րդ և Զիկատարի անտառապետության 6-րդ քառակուսիների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, գրունտային ճանապարհի աջ եզրով բարձրանալով լանջն ի վեր՝ դեպի հարավ, անցնում է 389.0 մ, հասնում Նոյեմբերյանի անտառապետության 8-րդ և 9-րդ քառակուսիների բաժանման N 1 սահմանակետին: Սահմանագիծը, N 1 սահմանակետից անցնելով նույն ճանապարհի աջ եզրով՝ 137.0 մ, հասնում է արգելավայրի մուտքի N 2 սահմանակետին, այնուհետև, շարունակելով ճանապարհի աջ եզրով դեպի հարավ, սահմանագիծն անցնում է 439.0 մ, հասնում «Զիկատար» պետական արգելավայրի, Նոյեմբերյանի անտառապետության 9-րդ և Զիկատարի անտառապետության 5-րդ քառակուսիների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:
«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 965.0 մետր է:

«Զիկատար» պետական արգելավայր-Զիկատարի անտառապետություն Սահմանագիծը՝ «Բ»-«Ա»

«Զիկատար» պետական արգելավայրի, Նոյեմբերյանի անտառապետության 9-րդ և Զիկատարի անտառապետության 5-րդ քառակուսիների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձրանալով լանջն ի վեր՝ 814.0 մ, հասնում 1460.0 մ նիշ ունեցող բլրի գագաթին գտնվող «Զիկատար» պետական արգելավայրի և Զիկատարի անտառապետության 4-րդ ու 5-րդ քառակուսիների բաժանման N 3 սահմանակետին: Սահմանագիծը N 3 սահմանակետից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, լանջն ի վար անցնում 417.0 մ և հասնում 1385.0 մ բարձրություն ունեցող N 4 սահմանակետին, այնուհետև, թեքվելով հարավ-արևմուտք, անցնում է 343.0 մ ձորակում գտնվող N 5 սահմանակետին: Սահմանագիծը N 5 սահմանակետից թեքվում է դեպի հարավ, ձորակով անցնելով 1134.0 մ, հասնում N 6 սահմանակետին, որը նաև Զիկատարի անտառապետության 4-րդ և 6-րդ քառակուսիների սահմանակետն է: Սահմանագիծը N 6 սահմանակետից թեքվում է հյուսիս-արևելք, ուղղահայաց կտրում լանջը, անցնում 273.0 մ և հասնում

հարևան ձորակում գտնվող N 7 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս և Զիկատարի անտառապետության 6-րդ քառակուսու սահմանագծով անցնում 245.0 մ, հասնում N 8 սահմանակետին: Սահմանագիծը N 8 սահմանակետից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 227.0 մ, հասնում N 9 սահմանակետին, որտեղից, թեքվելով դեպի արևելք, անցնում է 223.0 մ և հասնում N 10 սահմանակետին: Սահմանագիծը, N 10 սահմանակետից անցնելով 107.0 մ դեպի հարավ-արևելք, հասնում է N 11 սահմանակետին: Վերջինից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 215.0 մ և հասնում բացատում գտնվող N 12 սահմանակետին: Սահմանագիծը, N 12 սահմանակետից թեքվելով դեպի հյուսիս-արևմուտք, անցնում է 145.0 մ, հասնելով գրունտային ճանապարհի եզրին գտնվող N 13 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 97.0 մ և հասնում N 14 սահմանակետին: Սահմանագիծը, N 14 սահմանակետից ուղղությունը փոխելով դեպի հարավ, անցնում է 107.0 մ, հասնում «Զիկատար» պետական արգելավայրի, Նոյեմբերյանի անտառապետության 8-րդ և Զիկատարի անտառապետության 6-րդ քառակուսիների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4347.0 մետր է:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Մարգարյան

«ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար

Դ. Սարգսյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Զիկատար» պետական արգելավայրը (այսուհետ՝ արգելավայր) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս՝ մարզի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող 150.0 հեկտար հողերի վրա և ընդգրկում է մարզի հյուսիս-արևմտյան մասում՝ Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան դիրքադրության լանջերի անտառային բնական էկոհամակարգերը՝ Կողբ գետի աջափնյա վտակների ավազանների վերին հատվածները:

2. Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Զիկատար լեռնագագաթի հյուսիսահայաց լանջերի անտառային, բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության և պատմամշակութային եզակի հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է, ինչպես նաև՝ գիտափորձարարական աշխատանքների իրականացման, կադրերի վերապատրաստման և ուսումնասիրտադրական պրակտիկաների կազմակերպման նախադրյալների ապահովումը:

3. Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները Զիկատար լեռնագագաթի հյուսիսահայաց լանջերի բարձր լեռնային անտառային էկոհամակարգերի յուրահատուկ կենդանական աշխարհն ու անտառային բուսականությունն են:

II. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումը և պահպանությունը.

2) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

3) Զիկատար լեռնագագաթի հյուսիսահայաց լանջերի անտառային վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

4) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը.

5) էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպման, բնության տարեգրության վարման և տարածաշրջանի բնության թանգարանի կազմակերպման համար բազայի ապահովումը.

6) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար համապատասխան նախադրյալների ապահովումը.

7) գիտափորձարարական աշխատանքների իրականացման, կադրերի վերապատրաստման և ուսումնասիրտադրական պրակտիկաների կազմակերպման համար համապատասխան նախադրյալների ապահովումը:

III. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՌԵԺԻՄԸ

5. Արգելավայրի տարածքում արգելվում են՝

1) ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի բնական համալիրների զարգացման բնականոն ընթացքը, ինչպես նաև սպառնում է բնական միջավայրի անվտանգությանը.

2) տարածքի ջրաբանական ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տարածաշրջանի բնակավայրերում խմելու համար պահանջվում են ջրային ռեսուրսներ.

3) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

4) բույսերի և կենդանիների նոր տեսակների կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման ու կլիմայավարժեցման աշխատանքները.

5) թունաքիմիկատների օգտագործումը՝ բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը՝ բացառությամբ անտառի վնասատուների և հիվանդությունների զանգվածային բազմացման դեպքում, որը կարող է բնական անտառային էկոհամակարգի դեգրադացիայի պատճառ դառնալ.

6) էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

7) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության ու շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը.

8) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտմամբ), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

9) անտառահատումները՝ բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների.

10) ընդհանուր օգտագործման ճանապարհներից ու ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրանց համար չնախատեսված վայրերում.

11) տնտեսական և բնակելի օբյեկտների շինարարությունն ու շահագործումը, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և այլ հաղորդակցուղիների շինարարությունը՝ բացառությամբ արգելավայրի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների (գրասենյակ, տնակ և այլն).

12) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

6. Արգելավայրի տարածքում օրենքով սահմանված կարգով թույլատրվում է իրականացնել՝

1) էկոհամակարգին բնորոշ հազվագյուտ և արժեքավոր վայրի բույսերի ու կենդանիների

վերարտադրությունը.

2) էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.

3) սահմանված կարգով ճանաչողական զբոսաշրջության կազմակերպումը.

4) զբոսաշրջության՝ ներառյալ էկոզբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների կազմակերպումը, հաշվի առնելով նաև արգելավայրի տարածքում առկա պատմության և մշակույթի հուշարձանների տեղաբաշխվածությունը և պատմական միջավայրի անխաթարության ապահովումը.

5) օրգանական պարարտանյութերի և բուսական ու կենդանական տեսակների վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական ծագում ունեցող պայքարի միջոցների օգտագործումը.

6) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացումը.

7) գիտահետազոտական ուսումնասիրություններ.

8) սիրողական և մարզական ձկնորսությունը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում.

9) ռեկրեացիայի նպատակով հողերն օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրելը.

10) էկոլոգիապես մաքուր մեթոդներով գյուղատնտեսական մթերքների արտադրությունը:

7. Արգելավայրի տարածքում բնապահպանական և բնօգտագործման ռեժիմների պահպանության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է պետական լիազորված մարմինը՝ «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Բնապահպանական ռեժիմները և բնօգտագործման թույլատրելի ձևերը խախտող կազմակերպություններն ու քաղաքացիները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

IV. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻՆ

9. Արգելավայրի պահպանման գոտին ընդգրկում է Կողբ գետի վերին հոսանքների, ինչպես նաև Զիկատար լեռնագագաթի հյուսիսահայաց լանջերի ջրհավաք ավազանի ջրբաժանային գծերով սահմանափակված տարածքները:

V. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏՈՒ ՌԵԺԻՄԸ

10. Արգելավայրի պահպանման գոտու տարածքում արգելվում է իրականացնել տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

11. Արգելավայրի պահպանական գոտու տարածքում ընդգրկված սեփականատերերի հողամասերի օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

VI. ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12. Արգելավայրի պահպանությունն իրականացնում է «Անտառային գիտափորձարարական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Մարգարյան

Ց Ա Ն Կ

**«ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ**

NN ը/կ	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Գումարը (դրամ)
1.	Ավտոմեքենա «ԳԱԶ-24»	1	160000
2.	Սուրճի սեղան	10	256170
3.	Աթոռ` բանակցային	168	2818872
4.	Խոհանոցային աթոռ	80	1427760
5.	Բազկաթոռ	4	104400
6.	Խոհանոցային սեղան	20	590640
7.	Բազմոց	3	683433
8.	Պահարան	43	931853
9.	Երկար սեղան	1	258100
10.	Մահճակալ	43	2879710
11.	Զգեստապահարան	17	1323365
12.	Գրապահարան	5	364435
13.	Բանակցային սեղան	1	228132
14.	Համակարգչային սեղան	4	165300
15.	Գրասեղան	5	256165
16.	Սպասք լվացող մեքենա	1	268733
17.	Վառարան	2	372166
18.	Սառնարան «HITACHI»	2	477534
19.	Սառնարան «Panasonic I»	5	788800
20.	Հեռուստացույց «Philips»	4	603200
21.	Լվացքի մեքենա	1	248433
22.	Համակարգիչ	4	1517668
23.	Անխափան սնուցման աղբյուր	4	60000
24.	Լազերային տպիչ	2	49164
25.	Պրոյեկտոր	1	566467
	Ընդամենը		17400500

»:

Հայաստանի Հանրապետության
 կառավարության աշխատակազմի
 ղեկավար

Դ. Սարգսյան

Ց Ա Ն Կ

**«ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ
ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

NN ը/կ	Անվանումը	Քանակը (հատ)	Գումարը(հազ. դրամ)
1.	Նոր ջրագիծ (մ)	1	22792.0
2.	Գլխավոր մասնաշենք	1	20665.0
3.	Ճաշարան	1	27306.0
4.	Տնակ (քոթեջ)	2	11766.0
5.	Տնակ (քոթեջ)	1	16807.0
6.	Ջրամբար-լողավազան	1	661.0
7.	Ջրամբար (փակ)	1	100.0
8.	Ստորգետնյա պոմպակայան	1	1359.0
9.	Բաց ջրավազան	1	150.0
10.	Ջրավազանի վրա գտնվող դասասենյակ	1	204.0
11.	Սպասարկող անձնակազմի տնակ	1	1782.0
12.	Հսկիչ սենյակ և գլխավոր մուտքի տարածք	1	1893.0
13.	Արտաքին՝ գյուղական տիպի գուգարան	1	213.0
14.	Կեղտաջրերի կուտակման հոր	1	4720.0
15.	Հացի ինքնաշեն փուռ	1	50.0
	Ընդամենը	16	110468.0 »:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան